ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Տնօրեն՝ Արման Սարգսյան

«02» սեպտեմբեր 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՊՀ առընթեր Ա. Շահինյանի անվան
Ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց

9ա դասարան

Նազարեթյան Իրինա Սերյոժայի

« 2022-2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)**

9ա դասարանում սովորում են 29 աշակերտ, որից 23 տղա են, 6-ը՝ աղջիկ: Դասարանում իշխում է ջերմ ու համերաշխ մթնոլորտ, ձևավորվել է կուռ և ամբողջական կոլեկտիվ: Դասարանում կան ակտիվ երեխաներ, սակայն կառավարելի են և խնդիրներ չեն առաջացնում: Գերազանց առաջադիմությամբ սովորող աշակերտ չկա, հարվածային 9-ը աշակերտ:

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում**

Ամեն շաբաթ անցկացնել դասղեկական ժամ՝ տարբեր թեմաներով (մշակութային, աշխատանքային, ընտանեկան, հասարակական և այլն): Կազմակերպել էքսկուրսիաններ քաղաքում և քաղաքից դուրս, այցելել թանգարաններ, պատմամշակութային տարբեր վայրեր՝ կինո, թատրոն, համերգասրահ: Անցկացնել գրական-երաժշտական ցերեկույթներ՝ տարբեր թեմաներով: Հրավիրել ծնողական ժողովներ, քննարկել տարբեր հարցեր՝ կապված ուսումնադաստիարակչական աշխատանքների հետ: Ստեղծել ծնող-դպրոց համագործակցային ամուր կապ ի շահ աշակերտների:

3. **Հայեցի դաստիարակություն**

3.1 Հոգևոր դաստիարակություն

Աշակերտների մեջ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիրակությանը: Կարևորել կրոնի, հավատքի և եկեղեցու դերը: Աշակեևտներին պետք է ներկայացնել, որ մեր պետականության պահպանման մեջ վճռորոշ դեր է կատարել մեր կրոնը և լեզուն:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Սովորողների մեջ ձևավորել գեղեցիկի ընկալումը: Անցկացնել զրույցներ, քննարկումներ, գեղեցիկի ընակալման շուրջ: Երեխաներին պետք է հաճախակի տանել գեղագիտական կենտրոններ, ցուցահանդեսներ, մանկապատանեկան տներ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, հայ ազատամարտիկների նկատմամբ: Ձևավորել հայրենիք սիրող և ռազմարվեստին տիրապետող ապագա զինվոր: Այցելել Եռաբլուր:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, որը կնպաստի անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, առողջ մարմնում՝ առողջ հոգի: Վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում: Հաճախակի կազամկերպել մրցումներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում: Կազմակերպել շաբաթօրյակներ, դասասենյակի մաքրություն, դպրոցամերձ տարածքը մաքրել աղբից, կատարել ծառատունկ:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում: Անցկացնել զրույց << ի՞նչ ենք անում մենք բնության պահպանման համար>>:

4. Դպրոց- ընտանիք կապը

Երեխայի կրթության և դաստիրակության հարցում մեծ դեր ունի ոչ միայն դպրոցը, այլև ընտանիքը: Ուստի ծնողի և դպրոցի կապը սերտ և համգործակցված պետք է լինի: Ծնողը պետք է հաճախակի այցելի դպրոց, դասղեկից տեղեկանա իր երեխայի վարքի և առաջադիմության մասին, որպեսզի առաջացացած յուրաքանչյուր խնդիր լուծվի ժամանակին:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետ	Կատարողներ
I	Նոր ուսսումնական տարվա սկիզբ: Գիտելիքի օր		աշակերտ դասղեկ
II	Դասարանի ավագի և օգնականների աշակերտական խորհրդի կազմի հաստատում:		աշակերտ դասղեկ
III	Անկախությունը մեծագույն արժեք և նվաճում: ՀՀ պետական խորհրդանիշները զրույցի անցակացում:		աշակերտ դասղեկ
IV	Քննարկում՝ ես գիտեմ իմ իրավունքներն ու պարտականությունները:		աշակերտ

	Աշակերտների մոտ նպատակն է հստակեցնել իրավունքներն ու պարտականությունները:		դասղեկ
V	<<Տոնդ շնորհավոր, սիրելի՛ ուսուցիչ>> անցկացնել դասարանական փոքրիկ միջոցառում:		աշակերտ դասղեկ
VI	<<Փոքրիկ պատմություններ>> անհատի և հասարակության խնդիրների մասին>>: Տեղեկացնել, թե մարդկությունը ինչ ժամանակաշրջան է անցել:		աշակերտ դասղեկ
VII	<< Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>> նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտա կանությունները:		աշակերտ դասղեկ
VIII	Ովքե՞ր են իմ ընկերները: Ի՞նչն եմ կարևորում ընկերության մեջ:		աշակերտ դասղեկ
IX	Մեր քաղաքի պատմությունը՝ Երևանի տոն:		աշակերտ դասղեկ
X	<<Պատասխանատու քաղաքացի>> աշակերտները այս թեմայից հետո կիմանան, թե ինչպես պետ է լինի ցանկացած քաղաքացի:		աշակերտ դասղեկ
XI	Զրույց՝ համակարգիչը օգնու՞մ է, թ՞ե խանգարում է մեզ:		աշակերտ դասղեկ
XII	<<Իմ հայրենիքի հետագա ճակատագիրը>>՝ զրույց:		աշակերտ դասղեկ
XIII	<< Բնական աղետներ >> ներկայացնել բնական աղետների առաջացման պատճա ռները և դրանց հետևանքները:		աշակերտ դասղեկ
XIV	Նախապատրաստվել Ամանորին:		աշակերտ դասղեկ
XV	Առաջին կիսամյակի արդյուքների վերհանում:		աշակերտ դասղեկ
XVI	Նոր տարի նոր սպասումներ նոր անելիքներ:		աշակերտ դասղեկ
XVII	Լինենք ավելի բարեկիրթ և քաղաքավարի:		աշակերտ դասղեկ

XVIII	Ազգային և միջազգային տոներ: Նպատակն է հստակեցնել ազգայի տոների առանձնահատկությունները:		աշակերտ դասղեկ
XIX	Մի խոստացիր այն ինչ չես կարող անել:		աշակերտ դասղեկ
XX	<< Բարեկամներ և թշնամիներ >> քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները:		աշակերտ դասղեկ
XXI	<<Ինչպե՞ս հարթել դասարանում առաջացած կոնֆլիկտը>>:		աշակերտ դասղեկ
XXII	<< Բոլորս տարբեր ենք, բոլորս ապրում ենք միասին>>:		աշակերտ դասղեկ
XXIII	<< Ինչպես վարվել աղբի հետ >> օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցութ յանը բնության և մարդու առողջության վրա:		աշակերտ դասղեկ
XXIV	<<Լինենք նպատակասլաց>>:		աշակերտ դասղեկ
XXV	Բանավեճ՝ <<ի՞նչ է նշանակում հերոս>>:		աշակերտ դասղեկ
XXVI	<<Երաժշտությունը մեր կանքում>>: Ձևավորել երաժշտության հանդեպ սեր:		աշակերտ դասղեկ
XXVII	<<Աշխատանքն է ծնում բարիքներ>>:		աշակերտ դասղեկ
XXVIII	<<կարող եմ օգտակար լինել>: Աշակերտների մոտ ձևավորել բարին և դրականը:		աշակերտ դասղեկ
XXIX	<< հերոս, որին կուզենայի նմանվել>>		աշակերտ դասղեկ
XXX	<< Հայոց Մեծ եղեռն >> աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:		աշակերտ դասղեկ
XXXI	Արցախի հերոսամարտիկներ, 44-օրյա պատերազմ, Եռաբլուր պանթեոն:		աշակերտ դասղեկ

XXXII	Ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողությունն երին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:		աշակերտ դասղեկ
XXXIII	ԻՆչպե՞ս եմ փակում տարին:		աշակերտ դասղեկ
XXXIV	Տարեվերջյան արդյունքների քննարկում, էքսկուրսիայի կազմակերպում:		աշակերտ դասղեկ